

379

Ծ-98

սկ

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Ջ Ո Ւ
Թ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ա Ծ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Handwritten signature

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

379
Ծ-98

Լ Ո Ւ Ս Ժ Ո Ւ Տ

Հ Ա Յ Ո Յ Լ Ե Չ Ո Ի

Ծ Ր Ա Գ Ի Ր (145 ժամ) *

Կարգալու ունակություն

Կարողանալ արագ և գիտակցորեն կարգալ, առանց աղավաղելու բառերը:

Կարգալ առողանությամբ՝ համապատասխան կետադրական նշաններով (վերջակետ, հարցական և բացականչական նշաններ, շեշտ և այլն):

Լուռ կարգալու ունակություն: Կարողանալ պատմել կարգացածը: Գրքից ոգտվելու կարողություն, ծանոթանալ գրքին (հեղինակը, անունը, հրատարակության տեղը, տարին, ցանկից ոգտվելու կարգը):

Կարողանալ լրագիր կարգալ, հասկանալ վերնագրերի, առաջնորդող հոդվածների, հեռագրերի, տեղերից յեղած թղթակցությունների նշանակությունը և բովանդակությունը:

Բառարանում գտնել կարգալու ընթացքում պատահած անծանոթ բառերի բացատրությունը:

Բանավոր յեվ գրավոր խոսքի ունակություն

Գրել նամակ, դիմում, կազմել ստացական, լրագրագիր, հաշիվ, ժողովի արձանագրություն, պատասխանել տրված հարցերին, կազմել իր յելույթի պլանը և այլն:

Կարողանալ կազմել լրագրական թղթակցություններ, նկարագրել իր սպորտմենից կամ դիտած յերկույթներից վերեւ գեպը, գրել կամ բանավոր կերպով գնահատական տալ իր դիտած կինոնկարների, ներկայացումների կամ կարգացած գրքույկների մասին:

Բառապաշարի հարստացում. ծանոթություն այն բառերի հետ, վորոնք հաճախակի հանդիպում են լրագրերում, քաղաքական և գիտական-հանրամատչելի գրքույկներում:

* Ծրագիրը կազմված է ՌՆՑՍՀ Լուսնողկոմատի նույն գաղտնիքի մամբ 1940 թ. լույս ընծայված ծրագրի 7-րդ հրատ. սկզբունքով:



Հայոց լեզվի ծրագիրը կազմեց՝ Մ. Մայիլյան
Խմբագրեց՝ Ս. Սարգսյան
Աշխարհագրության և բվաբանության ծրագիրը խմբագրեց՝ Ավ. Ճուզոբյան
Կոնտ. որբագրիչ՝ Մ. Գաբունիկյան
Հանձնված է առաքության 1940 թ. ոգոստոսի 16-ին
Ստորագված է ապագելու 1940 թ. ոգոստոսի 29-ին
ՎՖ 695 հ. առ. № 54, պատվեր № 200, տիպոգ 1500
Լուսնրատի տպարան, Յերևան, Տերյան № 127

Գրեյու սեխնիկա, ուղղագրություն յեվ փեականություն

Գրեյու տեխնիկան (գրել առանց տառեր բաց թողնելու և առանց ափելորդ տառերի: Կարողանալ մի տողանի տետրում գրել հաժմապի և պարզ ձևապարով):

Կարողանալ անսխալ արտագրել հոգված և գեղարվեստական յերկի փոքր հատված:

Հասկացողություն նախադասության մասին: Նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապված բառերը: Վերջահետը նախադասությունից հետո: Հարցական և բացականչական նախադասություն:

Մեծատառերի գործածությունը՝ գրել սկսելիս, վերջակետից հետո, հատուկ անունների սկզբում (անուն, ազգանուն, հայրանուն, յերկրներ, շրջաններ, քաղաքներ, գյուղեր, փողոցներ, գետեր, ծովեր, լրագրեր, ժուռնալներ և գրքերի անունները) և այլն: Ծանոթություն հապավումների մասին (ՆՄՀՄ, ՀամԳ(բ)Կ, Ժողովխորհ և այլն), հասկացողություն նրանց նշանակության և կազմության մասին:

Հնչյուն և տառ: Ձայնավոր և բաղաձայն: Տառերի անունները — այբուբենն անգիր իմանալ: Ետունակել բառերը վանկերի բաժանելու վարժությունները: Գրելիս վանկերը տողազարձ անել, վանկերի բաժանելով: «ը» ձայնավորը տողազարձի ժամանակ:

Երբեքամբ և արտասանությամբ իրարից տարբերվող բառերի ուղղագրությունը (բ—փ, գ—ք, դ—թ, ձ—ց, շ—չ, զ—խ): «ը» ձայնավորը բառասկզբում՝ զբ, զգ, շա, սպ, սփ, սք, յերկբադաձայններից առաջ, «ը» ձայնավորը բառավերջում: Իկ, աի, ուկ, ուերի մասնիկների ուղղագրությունը, որինակ՝ ուլիկ, գետակ, ձագուկ, աշակերտուկ:

Յ-ով յերկհնչյուն բառի ուղղագրությունը, որինակ՝ այ, յո, յու, յե, յի, յա:

Յ ձայնակապի ուղղագրությունը (այա, այո, այու, այի, եյի, եյա, ոյի, ոյե):

Իա, իո, իու, իե և իի յերկձայնավորների ուղղագրությունը: (Մարիամ, պիոներ, միություն, Դանիել, Բաթումի):

Նախադասության կառուցվածքը (նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա, ստորոպյալ, նախադասության յերկրորդական անդամները):

Համառոտ և ընդարձակ նախադասություններ: Բառի կազմությունը: Նախդիրներ, նախածանցներ և վերջածանցներ: Ընդհանուր հասկացողություն խոսքի մասերի և նրանց նշանակության մասին (գոյական անուն, ածական անուն, բայ):

Գոյականները պատասխանում են «ով» և «ինչ» հարցին: Գոյականների թիվը (յեզակի, հոգնակի):

Բայերի փոփոխվելն ըստ ժամանակի, դեմքի և թվի:

Բարդ բառեր. բառարարության ընդհանուր կանոնավոր ձևերը, հողակապ. հնչյունափոխություն. «ու» և «ի» ձայնավորների փոփոխվելը չգրվող «ը»-ի (Չուր—Չրադաց, կիր—կրաքար), կամ բոլորովին գեղջվելը (անատուն—անասնապահ):

Գաղափար ուղղական հոլովի մասին՝ յենթակայի կապակցությամբ. հարցերով սովորեցնել մտացած հոլովները (սեռական, տրբական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական), բացատրելով յուրաքանչյուրի եյական առանձնահատկությունը:

Հատկություն ցույց տվող բառեր. նախադասության մեջ գտնել բառեր, վորոնք ցույց տան առարկայի վորախոսությունը: Ծանոթություն ածականի մասին:

Դիսոդություններ. ծրագիրն անցնելու մասին

Ծրագիրը յերեք բաժիններով սահմանագատելը չի նշանակում, թե կարգալու հատկացված բաժնի պարապմունքը պետք է տանել առանձին, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանն առանձին, ուղղագրությունն ու քերականությունն առանձին: Պարապմունքների ընթացքում ծրագրի բոլոր բաժինների միջև անհրաժեշտ է պահպանել սերտ կապ:

Կարգալու և գրելու տեխնիկային, ուղղագրությանն ու քերականությանը ծրագրով հատկացված ժամանակամիջոցը պետք է բաժանել հավասարապես, սակայն այս կամ այն բաժնի նկատմամբ կարելի չե կատարել վորոշ շեղում, նկատի ունենալով սովորողների ունեցած գիտելիքներն ու ունակությունները: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը առնչվում է կարգալուն, գրելուն կամ քերականության վարժություններին:

Հայոց լեզվի դասերին գլխավոր տեղը պետք է հատկացնել կարգալուն և գրելուն: Ուղղագրության և քերականության դժով պետք է տանել կրկնողական աշխատանք և վորոշ բաժին անցնելուց հետո անպայման կատարել ամփոփում, դրան հատկացը-

ներով հատուկ ժամեր: Բացի դասարանական աշխատանքից ուսուցիչը սովորողներին պետք է տա նաև տնային՝ արտադասարանական աշխատանք (տնային ընթերցանութիւն, քերականական վարժութիւններ դասագրքերից և այլն): Ուսուցիչն անպայման պետք է պահանջի, վոր սովորողները ճշտութեամբ կատարեն տնային հանձնարարութիւնները և լինի հետևողական: Ուսուցիչը տնային աշխատանք տալու ժամանակ նկատի պետք է ունենա մեծահասակ սովորողների ժամանակի սղութիւնը և տա այնքան աշխատանք, վորքան նրանք հնարավորութիւնս կունենան կատարելու:

Կարգալը պետք է սկսել պարզ հողվածներից և պամվածքներից: Վորպես նյութ կարող են ծառայել կիսագրագիտութեան վերացման դպրոցների համար հրատարակված «Ընթերցարան» դասագրքի պարզ, փոքրիկ հողվածներն ու պատմվածքները: «Սկզբնակ ընթերցողներէ համար» հրատարակված մատչելի ու շրջանային թերթում տպված փոքրիկ հողվածները և այլն: Ուսուցիչը պարագմունքի հենց սկզբի որերից պետք է հետևի, վոր սովորողները կարգան վարժ ու արագ, բաց չթողնեն տառեր, չաղավաղեն բառերը և կանգ առնեն վերջակետից հետո ու կարողանան հասկանալ կարգացածը: Վորպեսզի կիսագրագետները կարողանան հասկանալ իրենց կարգացածը, նրանց հետ միասին պետք է քննարկել կարգացած հողվածը և տալ ստուգիչ հարցեր: Այն կիսագրագետներին, վորոնք արդեն վարժվել են ազատ և կանոնավոր կարգալու, պետք է սովորեցնել կարգալ հարցական ու բացականչական նախադասութիւններ՝ ապահովելով կանոնավոր շեշտադրութիւն:

Չափազանց կարևոր է, վորպեսզի սովորող դպրոցն ավարտելուց հետո, կարողանա վոչ միայն բարձրաձայն, այլև լուռ կարգալ, վոր նա իր պարագմունքների ժամանակ իվիճակի լինի ինքնուրույն կերպով ոգտվել գրքից: Յերը կիսագրագետների կարգալու տեխնիկան վորոշ չափով բարելավված կլինի, դպրոցում պետք է գործածութեան մեջ դնել լուռ կարգալու պրակտիկան, կապված գանազան առաջադրութիւններ կատարելու հետ (տվյալ հարցի ուղղութեամբ հողվածում յեղած կարևոր կետերի ընտրութիւն կամ նշում կատարելը, ըստ տվյալ պլանի հողվածը մասերի բաժանելը և այլն):

Պարագմունքների պրոցեսում ուսուցիչը սովորողների մեջ աստիճանաբար պետք է զարգացնի հետաքրքրութիւն գեպի

լրագիրը, ինքը կարգա կարևոր նյութեր, կազմակերպի կողեկտիվ ընթերցում: Սովորողները պետք է ձեռք բերեն լրագրի նյութերի վերնագրերից համապատասխան յեղրակացութիւնների հանգելու, վորոշ հարցերի վերաբերյալ լրագրից կտրվածքներ կատարելու, լրագիր կարդալու ժամանակ աշխարհագրական քարտեզով ոգտվելու կարողութիւն: Ուսման յերկրորդ կիսամյակում սովորողներին պետք է ծանոթացնել առաջնորդող հողվածների, հեռագրերի և թղթակցութիւնների հետ, նրանց պետք է սովորեցնել համառոտ կերպով պատմել լրագրի վերջին 2—3 համարներում կարգացած նյութի բովանդակութիւնը: Այս աշխատանքի նպատակն այն է, վոր լրագրի ընթերցումը սովորողների համար դառնա մատչելի և կենսական պահանջ:

Ինքնուրույն ընթերցանութեանը վարժեցնելու համար, անհրաժեշտ է նրանց տալ տանը կարգալու մատչելի գրքեր, տանը կարգացած գրքերի վերաբերյալ դպրոցում կազմակերպել քննարկումներ: Կազմակերպել գեղարվեստական յերկերի բարձրաձայն ընթերցանութիւն, քննարկման յենթարկելով կարգացած նյութը:

Տնային և դասարանական ընթերցանութեան համար սովորողներին պետք է հանձնարարել ընկերներ Լենինի, Ստալինի, Վորոշիլովի, Կալինինի առանձին ճառերն ու հողվածները, ինչպես նաև Հ. Հակոբյանի, Ծիրվանգողեյի, Սրագու, Մուրացանի, Յ. Չարյանի, Ստ. Չորյանի, Գ. Դեմիրճյանի և ուրիշների յերկերից ամբողջական հատվածներ:

Ուսուցիչը հատուկ ուշադրութիւն պետք է դարձնի, վորպեսզի սովորողները հանրամատչելի քանաստեղծութիւններն ու առակներն անգիր սովորեն:

Մեծահասակ սովորողներին աստիճանաբար պետք է վարժեցնել գրագրաբանից ոգտվելուն:

Սովորողների բանավոր և գրավոր խոսքի ունակութիւնը զարգանում է կարգալու, գրելու և քերականութեան վարժութիւններին զուգընթաց: Դասարանում և տանը կարգալով, սովորողները հարստացնում են իրենց բառապաշարը, ծանոթանում են այն տերմիններին, վորոնք լայն չափով տարածված են մեր քաղաքական ու հասարակական կյանքում: Քերականութեան պարագմունքների ժամանակ նրանք սովորում են, թե ինչպես պետք է կառուցել նախադասութիւնը: Սովորողների այս ունակութիւնը զարգացնելու համար անհրաժեշտ է գրաղվել տրված հարցերին պատասխաններ ձևակերպելով, ընդարձակ նախադասութիւն-

ները համառոտ նախադասութիւններէ վերածելով, ինչպես նաև համառոտ նախադասութիւններէ ընդարձակ նախադասութիւններ կազմելով: Այս ուղղութեամբ տարվող աշխատանքը Հպետք ե սահմանափակվի ինչպիսի ժամերով, այլ անցկացնել դասընթացի ուսուցման ամբողջ ընթացքում:

Ուսման առաջին կիսամյակում կիսազրագետներին պետք է սովորեցնել կազմել գործնական գրութիւններ՝ ստացական, լիազորագիր, նամակ, դիմում և այլն, վորի համար ուսուցիչը նրանց նախորդ տալիս է համապատասխան որինակներ:

Յերկրորդ կիսամյակում կիսազրագետները պետք է կարողանան արձանագրութիւններ կազմել, նկարագրել իրենց ապրումները, տեսած դեպքերն ու յերևույթները, կազմել գիտողութիւններ, գրել շրջանային թերթի համար փոքրիկ հոդվածներ և այլն:

Ուսուցման ժամանակ ուղղագրութեան և քերականութեան տեխնիկան սերտորեն պետք է կապել իրար հետ և պարագմունքները անցկացնել այն կարգով, ինչպես ցույց է տրված ծրագրում:

Սովորողները դասերի ժամանակ ծանոթանում են ուղղագրական տարբեր կանոններ ունեցող բառերին: Պարագմունքի պրոցեսում ուսուցիչը պետք է նախազգուշացնի և ուղղի սովորողների սխալները, այդ աշխատանքը նա պետք է կատարի նույնիսկ այն դեպքում, յետե այդ սխալները վերաբերում են դեռ չանցած ուղղագրական կանոններին:

Ուսումնական տարվա սկզբում սովորողները պետք է գաղափար ունենան նախադասութեան մասին, իմանան, վոր խոսքը բաղկացած է նախադասութեաններից: Նախադասութեան մեջ յեղած բոլոր բառերը մտքի տեսակետից կապված են իրար հետ: Նախադասութեան բառերի մեջ յեղած մտքի կապը հայտնաբերվում է հարցերի ոգնութեամբ:

Սովորողներին բառակազմութեանը ծանոթացնելու ժամանակ ուսուցիչը նրանց ուղղագրութեանը հիմնականում պետք է կենտրոնացնի նախածանցի, արմատի և վերջավորութեան վրա: Պարզ որինակներով պետք է ընդհանուր հասկացողութեան տպը վերջածանցի մասին:

Սովորողներին պետք է ծանոթացնել խոսքի մասերի հետ: Գոյականներին ծանոթացնելիս պետք է սկսել այնպիսի բառերից, վորոնք առարկա յեն ցույց տալիս (սեղան, գիրք, մատիս

և այլն), վորից հետո նրանց ուղղագրութեանը հրավերել այսպիսի գոյական անունների վրա՝ ինչպիսիսն են հեղափոխութեան, սոցմրցում և այլն: Թե այս և թե այն գոյական անուններէ ընդհանուր հատկանիշը կայանում է նրանում, վոր նրանք պատասխանում են «ինչ» հարցին: Սովորողները պետք է իմանան, վոր յուրաքանչյուր գոյական անուն գրված է լինում յեղակի կամ հոգնակի թվով: Նրանց պետք է սովորեցնել, թե ինչպես գոյական անունները, մյուս բառերի կապակցութեամբ, յենթարկվում են փոփոխութեան, ընդունելով տարբեր հարցեր: Սովորողներին պետք է հասկացնել, վոր նման փոփոխութեանները կազմում են հոլովներ:

Հոլովների մասին սովորողներին պետք է տալ ընդհանուր հասկացողութեան, իսկ յետե լավ են ըմբռնում, կարելի յե մասնաբաժան ծանոթացնել բոլոր հոլովների հետ, այնպես վոր նրանք ի վիճակի լինեն տարբերելու բոլոր հոլովները:

Ածական անունների ծանոթացումը պետք է տարվի նույն կարգով, ինչպիսի գոյական անուններին: Կարելի չէ մասնաբաժան յերպով դիտել տալ ածականների հոլովային փոփոխութեանները, սա յերկար ժամանակ կպահանջի, վորպիսիս իր տրամագրութեան տակ չունի կիսազրագրութեան վերացման դպրոցի հայաց լեզվի դասատուն:

Բայերի հետ ծանոթանալու ժամանակ սովորողներէ ուղղագրութեանը պետք է դարձնել բայերի մեջ ըստ ժամանակի կատարվող փոփոխութեանների վրա:

Հայոց լեզվի դասավանդման ամբողջ ընթացքում ուսուցիչը պետք է ոգտագործի այնպիսի նյութեր, վորոնք վերցված լինեն քեծանասակներին հետաքրքրող բնագավառից:

ԹՎ Ա.Բ.Ա.ՆՈՒԹՅՈՒՆ*

ԾՐԱԳԻՐ (125 ժամ)

Ծրագրի ծավալը

Ամբողջ թվերի գրելը և կարդալը մինչև միլիարդ, ամբողջ թվերի գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը: Հասարակ կոտորակներ, կոտորակների ձևափոխելը, կոտորակների գումարումը և հանումը, կոտորակների մեծացնելը և փոքրացնելը մի քանի անգամ, ամբողջի մասը գտնելը և մասից ամբողջը գտնելը: Տասնորդական կոտորակների թվագրությունը, գումարումը և հանումը, տասնորդական կոտորակների բազմապատկումը և բաժանումը ամբողջ թվերի վրա: Թվի տեղադրանքը, ուղղանկյան և քառակուսու մակերեսի հաշվումը, ուղղանկյուն սենյակի ծավալի հաշվումը:

Մշակման հաջորդականությունը

1. Ամբողջ թվերի կարդալը և թվագրությունը միլիոնի սահմանում: Գաղափար միլիարդի մասին: Ամբողջ թվերի կարդալը և թվագրությունը միլիարդի սահմանում: Մեծ թվերի կլորացումը

2. Ամբողջ թվերի գումարումը և հանումը: Ձերոները նվագելի մեջ:

3. Բազմապատկում միանիշ թվով: Բազմապատկում կլոր տասնյակներով, կլոր հարյուրյակներով և կլոր հազարյակներով: Բազմապատկում յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերով: Ձերոները բազմապատկիչների մեջտեղում և վերջում:

4. Բաժանումը միանիշ թվի վրա: Յերկանիշ թվի բաժանումը (բանավոր) յերկանիշ թվի վրա: Թվի բաժանումը (գրավոր) յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերի վրա: Ձերոները բաժանարարի մեջտեղում և վերջում: Բազմապատկման և բաժանման առուզումը: Ժամանակի չափերը: Մեծ չափերի փոխարինումը փոքրերով և փոքրերը՝ մեծերով:

*) Ծրագրերը կազմել է Ի. Մ. Բոգդանովը: Ծրագրերը կազմելու մեջ մասնակցել են Վ. Լ. Նմենովը, Բ. Տ. Սնիգիրովը, Նիկիտինը:

5. Ուղիղ գծի հատվածի չափումը: Մակերեսի չափեր (քառակուսի մետր— m^2 , քառակուսի դեցիմետր— dm^2 , քառակուսի սանտիմետր— sm^2 , ար— a , հեկտար— ha , քառակուսի կիլոմետր— km^2): Ուղղանկյան և քառակուսու մակերեսի հաշվումը:

6. Դիագրամների և գրաֆիկների ընթերցումը:

7. Հասարակ կոտորակներ: Գաղափար կոտորակի մասին: Կոտորակի համարիչը և հայտարարը: Կոտորակի կարդալը և գրելը: Կանոնավոր և անկանոն կոտորակ: Խառը թիվ: Անկանոն կոտորակից ամբողջ թիվ դուրս բերելը: Խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելը: Կոտորակների համեմատումը: Կոտորակների հայտարարները պետք է լինեն միայն միանիշ կամ յերկանիշ թվեր: Կոտորակները մեծացնելը և փոքրացնելը մի քանի անգամ: Կոտորակի հիմնական հատկությունը: Կոտորակների մանրացումը և կրճատումը: Միևնույն հայտարար ունեցող կոտորակների գումարումը և հանումը: Տարբեր հայտարարներ ունեցող կոտորակների գումարումը և հանումը, վորոնցից մեկը—մնացած հայտարարների բազմապատիկն է: Ամբողջի մասը գտնելը և սված մասով ամբողջ գտնելը (յերկու գործողությունը):

8. Տասնորդական կոտորակների կարդալը և թվագրումը մինչև հազարերորդական մասը: Տասնորդական կոտորակի համարիչն ու հայտարարը: Թվանշանի տեղային նշանակությունը թվի մեջ: Տասնորդական կոտորակի հիմնական հատկությունը, տասնորդական կոտորակի վերջում զերոներ գրելու կամ յեղած զերոները ջնջելու դեպքում կոտորակը մնում է անփոփոխ: Տասնորդական կոտորակը մեծացնելը և փոքրացնելը 10, 100, 1000 անգամ և այլն:

Բարդ անվանական թվերը գրելը տասնորդական կոտորակով (մետրական չափեր): Մեծ թվերի կրճատ գրելը տասնորդական կոտորակով: Կրճատ գրածի լրիվ վերականգնումը:

9. Տասնորդական կոտորակների գումարումը և հանումը (բանավոր և գրավոր):

10. Տասնորդական կոտորակի բազմապատկումը ամբողջ թվով (բանավոր և գրավոր): Ձերոները արտադրյալի վերջում:

11. Տասնորդական կոտորակի բաժանումը ամբողջ թվի վրա (բանավոր և գրավոր): Ամբողջ թվի բաժանումը ամբողջ թվի վրա վորոշակի ճշտությամբ: Մոտավոր քանորդը պակասորդով և

Ֆնացորդով: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը: Մի-
ջին թվաբանականը:

2. Գաղափար տոկոսի մասին: Թվի մեկ և մի քանի տո-
կոսը գտնելը (բանավոր և գրավոր):

13. Ծավալի չափեր (խորանարդ մետր— m^3 , խորանարդ դե-
ցիմետր— dm^3 , խորանարդ սանտիմետր— sm^3 : Ծավալային չա-
փերի միջև յեղած հարաբերությունը: Ուղղանկյուն սենյակի ծա-
վալի հաշվումը:

14. Ամփոփում և հաշվառում:

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.—1. Յուրաքանչյուր բաժին անցնելիս
պետք է խնդիրներ լուծվեն: Ամբողջ դասընթացի ընթացքում
անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սովորողնե-
րի կողմից ուսուցչի դեկավարությունը խնդիրներ կազմելու
վրա՝ ոգտագործելով հիմնարկության, քաղաքի, շրջանի,
գյուղի վիճակագրական ավյալները:

2. Վորպես ուսումնառոժանդակ պարագաներ դպրոցում
պետք է լինեն. համրիչներ, չափերի նմուշներ, մետրական
չափերի աղյուսակ, կոտորակները և տոկոսները պատկերող
աղյուսակներ:

Ժամերի որինակելի բաժխումն ըստ քեմաների

1. Թվագրում և հաշվում միլիարդի սահմանում: Գումար-
ման և հանման կրկնություն: Միանիշ թվի վրա բազմապատկե-
ման կրկնությունը: Բազմապատկում յերկանիշ և բազմանիշ
թվերի վրա (25 ժամ):

2. Միանիշ թվի վրա բաժանման կրկնություն: Բաժանում
միանիշ և բազմանիշ թվերի վրա: Ուղղանկյան և քառակուսու-
մակերեսի հաշվումը: Իրագրամների և գրաֆիկների ընթերցումը
(28 ժամ):

3. Հասարակ կոտորակներ (22 ժամ):

4. Տասնորդական կոտորակների կարգավր, թվագրումը, գու-
մարումը և հանումը: Տասնորդական կոտորակների բազմապատ-
կումը և բաժանումը ամբողջ թվի վրա (32 ժամ):

5. Տոկոսային հաշվումներ, ծավալների հաշվումներ և կրկե-
նություն (18 ժամ):

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ (60 ժամ)

I. Ի՞նչ է աշխարհագրությունը յեվ ինչո՞ւ պետք է այն
սովորել

Աշխարհագրության նշանակությունը (կրթական, գործնա-
կան և քաղաքական): Տարբեր յերկրների բնության, տնտե-
սության, կուլտուրայի զանազանությունների ցուցադրումը:

II. Յերկիրը—մոլորակ

Գաղափար հորիզոնի մասին. հորիզոնի կողմերը և կողմնո-
րոշում տարածության մեջ: Հորիզոնի ընդարձակումը վեր բարձ-
րանալուն համընթաց:

Յերկրի ձևը. յերկրի գնդաձևությունը ապացույցներ: Գլո-
բուսը վորպես յերկրագնդի պատկերում (մոդել):

Յերկրագնդի պտույտն իր առանցքի և արեգակի շուրջը-
դրա հետևանքով ի՞նչ է առաջանում: Յերկրագնդի որական պտույ-
տը, ցերեկ և գիշեր: Բեկեռներ և հասարակած:

Յերկրագնդի տարեկան շարժումը: Յերկրագնդի առանցքի
թեքությունը և տարվա յեղանակները: Գիշերվա և ցերեկվա
տևողության փոփոխվելը տարվա ընթացքում:

Արեգակը վորպես ջերմության ու եներգիայի (և առհասա-
րակ կյանքի) աղբյուր յերկրի վրա: Արեգակնային համակարգու-
թյուն: Յերկրի գիրքը արեգակնային համակարգության մեջ:
Առաջներում ինչպիսի պատկերացում ունեյին յերկրի մասին:

Յերկրի մասին ճիշտ պատկերացում ունենալու համար մըդ-
ված պայքարի պատմությունից կարևորագույն մոմենտներ (Կո-
պերնիկ, Բրուսո, Գալիլեյ): Արեգակնային համակարգությունը
վորպես տիեզերքի մասը: Յերկիրը—մոլորակ:

III. Պլան յեվ քարտեզ

Գաղափար պլանի մասին. նրա պատրաստման ձևերը. պլա-
նի գործադրությունը:

Պլանը և աշխարհագրական քարտեզը:

Յերկրի մակերևույթի պատկերումը գլոբուսի և կիսագնդե-
քի քարտեզի վրա:

• Աշխարհագրական ցանց: Զուգահեռականներ և միջորեյա-
կաններ: Աշխարհագրական լայնություն: Աշխարհագրական յերկա-
րություն: Աշխարհագրական ցանցից ոգտվելու տարրական հմտու-
թյուններ:

Ցամաքի և ջրի բաշխումը յերկրագնդի վրա:

ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԵՐԸ. Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա
(Հյուսիսային և Հարավային), Ավստրալիա, Անտարկտիդա:

ՈՎԿԻՄՆՈՍՆԵՐԸ. Մեծ կամ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկա-
կան, Հյուսիսային Սառուցյալ:

Գաղափար ծովի, ծոցի, նեղուցի մասին:

ԾՈՎԵՐԸ. Բալթիկ, Սև, Միջերկրական:

ԾՈՅՆԵՐԸ. Մեքսիկական, Բիսկայան, Բենգալյան, Ֆիննական:

IV. Յերկրի կեղևվը

Յերկրագնդի կեղևները. յերկրի կեղևը (կարծր) և մթնո-
լորտը (գաղափար): Յերկրագնդի ներքին կազմությունը: Յերկրի
կեղևի կազմությունը: Զանգվածային և նստվածքային լեռ-
նածին տեսակներ: Հրաբուխներ, յերկրաշարժներ:

Յերկրի մակերևույթի ձևերը. դաշտավայրեր, բարձրություն-
ներ, լեռներ. սրանց պատկերումը քարտեզի վրա: Լեռներում
ձնահյուսերի և սառցադաշտերի առաջացումը:

Յերկրի ընդերքի հանածո հարստությունները վորպես եներ-
գիայի և հումքի կարևորագույն աղբյուրներ:

Աշխարհամասերի մակերևույթի ուսումնասիրությունը քար-
տեզով:

ՅեՎՐՈՊԱ. Դաշտավայրեր. Արևելա-Յեվրոպական, Գերմա-
նական, Ֆրանսիական: Լեռներ. Ալպյան, Կարպատյան, Ուրալյան,
Կովկասյան:

ԱՍԻԱ. Դաշտավայրեր. Արևմտա-Սիբիրական, Թուրանի,
Չինական, Գոուի և Ռիոնի: Պամիրի լեռնաշխարհ, Հայկական լեռ-
նաշխարհ: Լեռներ. Տյան-Շան, Հիմալայան:

ԱՄԵՐԻԿԱ. Դաշտավայրեր. Միսսիսիպիի, Ամազոնի: Լեռներ.
Վորդիլլերյան, Ալլեգանյան:

V. Ովկիսոսնեք, ծովեր, գետեր յեՎ լներ

ՈՎԿԻՄՆՈՍՆԵՐ ՅԵՎ ԾՈՎԵՐ. Ովկիսոսնեքի խորությունը-
Ծովային ջրի աղիությունը: Ծովերի սառչելիությունը: Սառցա-
սարեր և տորոսներ: Ծովային հոսանքներ (տաք և ցուրտ): Մա-
կընթացություններ և տեղատվություններ: Ծովափնյա գծերի
կտրամածությունը. ծոցեր, նեղուցներ, թերակղզիներ, կղզիներ:

Ծովերի հաղորդակցական և արդյունագործական նշանակու-
թյունը: Ծովային կարևորագույն ճանապարհները և պաշտա-
րանց համար: Հյուսիսային ծովային ճանապարհի յուրացումը:
Պապանինականների արշավախումբը Հյուսիսային բևեռում:

ԾՈՎԵՐ. Միջերկրական, Սև, Կասպից, Բալթիկ, Ճապո-
նական:

ԹԵՐԱԿՂՋԻՆԵՐ. Սկանդինավյան, Պիրենեյան, Ապենինյան,
Բալկանյան, Դրիմի, Հնդկական, Հնդկաչինի, Կամչատկա:

ԿՂՋԻՆԵՐ. Գրենլանդիա, Մեծ Բրիտանիա, Զոնգյան, Ճա-
պոնական, Ովկիսիա:

ՆԵՂՈՒՅՆԵՐ. Ջիբրալտարի, Դարգանելի, Բոսֆորի, Բերին-
գյան:

ԶՐԱՆՅՔՆԵՐ. Սուեզի, Պանամայի:

ՅԱՄԱՔԻ ԶՐԵՐ. Մակերեսային ջրեր: Աղբյուրներ:

ԳԵՏԵՐ. Գետերի սնումը և նրանց ուղղությունը: Գետերը
վորպես հաղորդակցության ճանապարհներ, եներգիայի և վտուղ-
ման աղբյուրներ: Զրանցքներ: Զրի կործանարար և շինարար
աշխատանքը. ձորեր, դելտաներ, կղզիներ:

Գետերը. Վոլգա—Ոկա և Կամա վտակներով: Դնեպր, Դանուբ,
Հոնոս, Որ, Յենիսեյ, Լենա, Ամուր, Նեղոս, Միսսիսիպի, Ամազոն:
Լճեր, հոսող և կանգնած. աղի և քաղցրահամ: Լճեր. Լադո-
գա, Ոնեգա, Արալյան, Բայկալ, Բալխաշ, Սևանա:

VI. Կլիմա

Յեղանակ, նրա տարրերը, բարեխառնություն, քամիներ, տե-
ղումներ: Դաղափար կլիմայի մասին: Կլիմայի նշանակությունը
գյուղատնտեսության մեջ: Պայքար կլիմայական վնասակար պայ-
մանների դեմ:

Արեգակի տարրեր բարձրությունը հորիզոնի վրա յերկրա-
գնդի զանազան վայրերում: Յերկրագնդի բաժանումը հինգ ջեր-
մային գոտիների:

Ցամաքի և ծովի վոչ համահավասար տաքանալը: Ծովային և ցամաքային կլիմաներ: Ծովային հոսանքների ազդեցությունը կլիմայի վրա: Վայրի բարձրության ազդեցությունը կլիմայի վրա (լեռնային կլիմա): Տեղումների բաշխումը յերկրագնդի վրա: Յերկրագնդի խոնավ շրջանները: Յերկրագնդի անապատները:

VII. Յերկրագնդի հողաբուսական գոտիները (գոնաները)

Հողի, բուսականության և կենդանական աշխարհի կախումը կլիմայից: Նրանց գոնալ (գոտիական) տեղաբաշխումը յերկրագնդի վրա:

Բևեռային շրջաններ, տունդրա, անտառ, տափաստան, կիսասանապատ, անապատ, մերձարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավանններ: Յուրաքանչյուր հողի, բուսականության և կենդանիների բնութագրումը:

Մարդու կողմից բնական հարստությունների ոգտագործումը առաջ և այժմ: Այս կապակցությամբ գիտություն, տեխնիկայի և յերկրի հասարակական կարգերի (կապիտալիստական և սոցիալիստական) դերը:

VIII. Յերկրագնդի բնակչությունը

Յերկրագնդի բնակված և չբնակված շրջանները: Յերկրագնդի բնակչության քանակը: Բնակչության բաշխումն ըստ աշխարհամասերի: Ռասաներ: Բարձր և ցածր ռասաների ռումունքի կեղծ լինելը: Բնակչության խտությունը: Յերկրագնդի ամենախիտ բնակչություն ունեցող շրջանները:

IX. Ասիայի ժամանակակից պետական բաժանումը

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը աշխարհը բաժանեց յերկու սիստեմի—սոցիալիստական սիստեմի և կապիտալիստական սիստեմի:

Պետական իշխանության կազմությունը կապիտալիստական յերկրներում (բարձրագույն իշխանության ներկայացուցիչը—թագավոր կամ պրեզիդենտ, գործադիր իշխանությունը—պրեմիեր մինիստրը և մինիստրներ, որենսդիր իշխանությունը—պարլամենտ): Պարլամենտական ընտրությունները և նրանց բնույթը տարբեր յերկրներում:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. 1. Իմպերիալիստական մեծ տերություններ. ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա:

2. Իմպերիալիստական փոքր պետություններ. Բելգիա, Հունդիա, Իսպանիա, Պորտուգալիա:

3. Գաղութներ. Հնդկաստան, Լիվիա, Ալժիր և այլ յերկրներ Աֆրիկայում:

4. Կախյալ յերկրներ. Ավստրալիա, Ամերիկայի յերկրներ մեծ մասը (Կանադա, Արգենտինա, Բրազիլիա և այլն):

Իմպերիալիստական յերկրների քաղաքականությունը դադարների և կախյալ յերկրների նկատմամբ: Պայքար հումքի աղբյուրների և շուկաների համար: 1914—1918 թվերի իմպերիալիստական պատերազմը: Յերկրորդ իմպերիալիստական պատերազմը:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. 1. ԽՍՀՄ-ի հարևան պետություններ՝ Ֆինլանդիայի, Գերմանիայի, Վենգրիայի, Ռումինիայի, Թուրքիայի, Իրանի, Աֆղանստանի, Չինաստանի, Մոնղոլիայի ու Տուվայի ժողովրդական հանրապետությունների և Ճապոնիայի:

2. ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի:

X. ԽՍՀՄ համառոտ տեսությունը

1. ԽՍՀՄ-ի դիրքը: Տերիտորիայի չափերը և բնակչության քանակը: ԽՍՀՄ վերամիացված տերիտորիաները: ԽՍՀՄ-ի դերը Յեվրոպայում և Ասիայում:

ՅԱՄԱՅՆՅՈՒՆ ՍՍՀՄԱՆՆԵՐ (սահմանամերձ յերկրներ):

ԾՈՎԱՅԻՆ ՍՍՀՄԱՆՆԵՐ. Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինգի, Ուտտի, Ճապոնական, Սև, Ազովի, Կասպից և Բալթիկ ծովերը:

ԹԵՐԱԿՂՁԻՆԵՐ. Ղրիմի, Կոլա, Կամչատկա, Չուկոտյան, Թայմիր, Ապշերոնյան:

ԿՂՁԻՆԵՐ. Մախալին, Նոր Յերկիր:

ՆԱՎԱՋԱՆԳԻՍՏՆԵՐ. Լենինգրադ, Մուրմանսկ, Արխանգելսկ, Իգարկա, Վադիլոստոկ, Նովորոսիսկ, Բաթումի, Ուֆեսսա, Վերորդ, Ալկերման:

2. ԽՍՀՄ-ի մակերևույթը: Դաշտավայրային հարթությունների գերակշռումը: Բարձրությունները: Լեռների ծայրամասային դասավորությունը:



ԴԱՇՏԱՎԱՅՐԵՐ. Արևելա-Յեզրոպական, Արևմտա-Սիբիրա-
կան, Թուրանի, Քուռի և Ռիոնի:

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Միջին-Ռուսական, Մերձվոլգյան,
Վոլինո-Պոդոլյան, Դոնեցի. Միջին-Սիբիրական և Հայկական լեռ-
նաշխարհները:

Լեռներ. Ուրալյան, Կարպատյան, Ղրիմի, Կովկասյան, Խի-
բիններ, Պամիրի, Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի և մյուս-
ները:

3. **ԽՍՀՄ** ոգտակառ հանածոներ: Ցարական Ռուսաստանում
ոգտակար հանածոների չհետազոտված լինելը. խորհրդային ժա-
մանակաշրջանում ձեռք բերած հաջողությունները:

ՔԱՐԱՄԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐ. Դոնեցի, Կուզնեցկի, Կարագան-
դայի, Մերձսիբիրյան, Տիվերուլիի, Տիվարչելիի և այլն:

ՆԱՎԹԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ. Բագու, Դրոզնի, Եմբա, Յերկորդ
Բագու, Դրոզորչի և այլն:

ՅԵՐԿԱՍԻՏԱՆՔ. Կերչ, Կրիվոյ-Ռոդ, Ուրալ (Բլադոդատ, Մազ-
նիտնայա, Խալիլովո), Կուրսկի մագնիսային անոմալիան (ԿՄԱ):

ՊՂՆՁԱՆՔ. Ուրալ, Ղազախստան, Հայաստանում՝ Ղափան,
Ալավերդի:

ՎՈՍԿԻ. Սիբիր, Ուրալ, Միջին-Ասիական հանրապետու-
թյուններ:

ԱՊԱՏԻՏՆԵՐ ՅԵՎ ՖՈՍՖՈՐԻՏՆԵՐ:


4. **ԽՍՀՄ-ի** գեներն ու լճերը: Գետերի հարթավայրային
բնույթը: Նրանց առանձնահատկությունները. ձմռան սառցա-
պատումը, զարնանային վարարումները, ամռան ծանծաղումը:
Գետերի ոգտազործումը նավագնացության, էլեկտրիֆիկացիայի,
վոտոգման համար: Զբոսայգիներ:

ԳԵՏԵՐ. Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ուր (Իրտիշ վտակով),
Յենիսեյ (Անգարա վտակով), Լենա, Ամուր, Նեվա, Վոլխով, Սվիր,
Պրուտ, Դեստր, Դեսպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կամա վտակներով),
Սիր-Դարյա, Ամու-Դարյա, Բուռ և Արաքս, Ռիոն:

ԶՐԱՆՑՔՆԵՐ. Վոլգա-Բալթիկ ծովյան, Սպիտակ-Բալթիկ
ծովյան, Մոսկվա-Վոլգա:

ԼՃԵՐ. Լադոգա, Ռևելա, Ելտոն, Բասկունչակ, Արալյան,
Բալխաշ, Բայկալ, Սելանա:

5. **ԽՍՀՄ-ի** կլիման և հողաբուսական գոտիները: **ԽՍՀՄ-ի**



գիրքը ցուրտ և բարեխառն կլիմայական գոտիներում: Հյուսի-
սային Սառուցյալ, Խաղաղ և Ասիանայան ռեգիոնների ազդե-
ցությունը: Կլիմայի փոփոխությունը արևմուտքից արևելք (գե-
պի արևելք ջրամաքային կլիմայի հատկությունների ուժեղացու-
մը): **ԽՍՀՄ-ի** հողաբուսական գոտիները:

6. **ԽՍՀՄ-ի** բնակչությունը: Քանակը: **ԽՍՀՄ-ին** վերամիաց-
րած նոր տերիտորիաների բնակչությունը: Բնակչության բնա-
կան աճը: Բնակչության խտությունը և նրա բաշխումը **ԽՍՀՄ-ի**
տերիտորիայի վրա: **ԽՍՀՄ-ի** բնակչության ազգային կազմի բաղ-
մնադանությունը:

7. **ԽՍՀՄ-ի** պետական կառուցվածքը: Ստալինյան Ման-
մանադրությունը: **ԽՍՀՄ-ն** — բանվորների և գյուղացիների սոցիա-
լիստական պետություն, նրա քաղաքական և անտեսական հիմ-
քը: **ԽՍՀՄ-ի** քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պար-
տականությունները:

ԽՍՀՄ-ի պետական կառուցվածքը: **ԽՍՀՄ-ն** կազմող տասնը-
վեց միութենական հանրապետությունները և նրանց մայրա-
քաղաքները:

Արևմտյան Ուկրաինայի վերամիացումը ՌԽՍՀ-ին և Արև-
մտյան Բելոռուսիայի վերամիացումը ԲՍՍՀ-ին Լեհական պետու-
թյան անկումից հետո: Բևասարարիայի և Հյուսիսային Բուլղարի-
այի վերամիացումը **ԽՍՀՄ-ին**:

Կարելական **ՍՍՀ-ի** վերածելը Կարելո-Ֆիննական միու-
թենական **ՍՍՀ-ի**: Մոլդավական **ՍՍՀ-ի** վերածվելը Մոլդավական
միութենական **ՍՍՀ-ի**: Բևասարարիայի տերիտորիայով:

ՌԽՍՀ-ի և միութենական մյուս հանրապետությունների
ալտոնոմ հանրապետությունները և ալտոնոմ մարզերը (որի-
նակներ): Մարզերի և յերկրամասերի բաժանումը (որինակներ):

ԽՍՀՄ պետական իշխանության բարձրագույն նրբանները:
Գերագույն Խորհուրդը և նրա կազմը: Միության Խորհուրդը և
Ազգությունների Խորհուրդը: Ժողովրդական Կոմիտեաների Խոր-
հուրդը: Ընդհանուր, համասար, ուղղակի ընտրական իրավունք,
զազանի քվեարկությունը:

8. **ԽՍՀՄ** սննդաբույրները: Բնական հարստություններն ու
սոցիալիստական սխառնը խոշորագույն հնարավորություններ
ստեղծեցին **ԽՍՀՄ** անախտության դարգացման համար: Առաջին
և յերկրորդ հնգամյակների նվաճումները (մեր յերկիրը հետամը-
նաց վիճակից վերածվեց հզոր խնդուստրիալ յերկիր): **ԽՍՀՄ** յու-

Ղովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պլանի հիմնական խնդիրները: Յերկրի պաշտպանության հզորության ամրապնդումը: Ազգային շրջանների և ծայրամասերի՝ ցարական Ռուսաստանի այս նախկին գաղութների, իսկ ներկայումս ԽՍՀՄ-ի իրավահավասար անդամների տնտեսական և կուլտուրական վերելքը:

Ելեկտրիֆիկացիան Խորհրդային իշխանության տնտեսական և տեխնիկական քաղաքականության հիմքն է: Խոշորագույն էլեկտրոկայանների կառուցումը, վորտեղ ողտագործվում է առանցիկ տարրեր տեսակները (քարածուխ, նավթ, տորֆ և այլն), ինչպես և ջրի (Շախտանկ ածուխը) և քամու եներգիան: Ելեկտրոկայաններ. Ետտուրային (տորֆ), Բնեւրի, Վոլխովի, Զագեսի, Թիոնգեսի, Բանաքեոգեսի, Սեվան-Ձանգու կասկազի (Շախտանկ ածուխ), Կաշիրի (տեղական գորշ քարածուխ), Ետերովի (քարածխային շտիր) և այլն:

ԱՐԴՅՈՒՆԱՅԵՐՈՒԹՅՈՒՆ: Խոշորագույն գործարաններ և կոմբինատներ. մետալուրգիական (Մադնիտոգորսկ, Ստալինսկ, Դոնբաս, Կրիվոյ Ռոզ, Կերչ, Տագիլ), ավտոմոբիլային (Մոսկվա, Գորկի), տրակտորային (Ստալինգրադ, Խարկով, Չելյաբինսկ), կոմբայնների (Մարատով), շոգեքարշա-վագոնաշինարարական (Կոլոմնա, Վորոշիլովգրադ և այլն), նավաշինարարական (Լենինգրադ, Վլադիվոստոկ, Գորկի, Նիկոլայեվ), էլեկտրոտեխնիկական և դադգյահաշինարարական (Մոսկվա, Լենինգրադ), քիմիական (Բերեզնիկի, Ստալինոգորսկ, Դոնբաս, Կիրովական), տեքստիլ ֆաբրիկաներ (Մոսկվայի և Իվանովոյի մարզեր, Լենինգրադ, Տաշքենտ, Անդրկովկասյան միութենական հանրապետություններ, Բաբնաուլ—Ալթայի յերկրամաս), թղթի ֆաբրիկաներ (Բալախնա, Լենինգրադի մարզ, Կարելո-Ֆիննական ԽՍՀ, Կամայի վերին հոսանք և այլն), սինթետիկ կաուչուկ (Յերևան): Թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը ԽՍՀՄ-ում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Գյուղատնտեսության վերակառուցումը (ԽՍՀՄ-ն գարձել է սոցիալիստական գյուղատնտեսության ամենախոշոր և առաջավոր յերկիրն ամբողջ աշխարհում): Կուլտնտեսություններ և խորհրատնտեսություններ:

Քարտեզի վրա ցույց տալ ցորենի, հաճարի, շաքարի, ճակնդեղի, բամբակի, վուշի գլխավոր շրջանները, անասնապահական շրջանները:


ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԳԱՐՆԵՐԸ: Տրանսպորտի նշանա-

կությունը յերկրի ժողովրդական տնտեսության և պաշտպանության համար: Յերկաթուղային ցանցի բաշխումը ցարական Ռուսաստանում: Յերկաթուղային շինարարությունը ԽՍՀՄ-ում: Ելեկտրիֆիկացիա: Յերկաթուղիների քարտեզը:

Հիմնական դադափար ջրային տրանսպորտի մասին (ժովային և գետային): Ավտոմոբիլային և ողային տրանսպորտը: Հյուսիսային ժովային ճանապարհը:



Գիրք 1 և ևրիք



Պրոգրամայ
 շկոլ ըյա մալոգրադոտնոյ
 ԱՐՄՅԱՆՏԻ ԵԶՅԱԿ
 ՄԱՏԵՄԱՏԻԿԱ
 ԴԵՕԳՐԱԲԻՅԱ
 ՍՐՈՏԻԶԴԱՏ